

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2021 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
/տևողությունը՝ 150 րոպե/
/գնահատման քայլը՝ 0,25 միավոր/

10-րդ դասարան

1. Դաշտային հետազոտությունները կատարվում են տարբեր փուլերով և իրականացվում տարբեր եղանակներով: Առանց մեկնաբանության թվարկե՛ք այդ փուլերը և իրականացման եղանակները.....1,5 միավոր

2. Դաշնային պետությունները ստեղծվում են 2 հիմնական հատկանիշի հիման վրա: Որո՞նք են դրանք: Յուրաքանչյուր հատկանիշով բերե՛ք 2-ական պետության օրինակ.....1,5 միավոր

3. Ժամանակակից մարդու առաջացման և զարգացման ի՞նչ ժամանակաշրջաններ են առանձնացվում: Ե՞րբ է առաջացել բանական (մտածող) մարդը..... 2 միավոր

4. Որո՞նք են առանցքային զարգացող երկրները և ինչո՞ւ են դրանք այդպես կոչվում..... 2 միավոր

5. Ինչպիսի՞ ազդեցություն ունեն Հարավային Ամերիկայի բնակլիմայական պայմանների վրա Իսադադ և Ատլանտյան օվկիանոսները: Համառոտ բացատրե՛ք տարբերությունները..... 2 միավոր

6. Ի՞նչ են նշանակում հետևյալ տերմինները (բացատրե՛ք)..... 2 միավոր
 1. բարրել,
 2. մելիորացիա,
 3. աբրազիա,
 4. շիւեր:

7. Ինչի՞ մասին է մոբիլիզմի տեսությունը, և ո՞վ է հեղինակը: Հետագայում ի՞նչ զարգացում ստացավ տեսությունը..... 2 միավոր

8. Գիտահետազոտական նավը գտնվում է Ատլանտյան օվկիանոսում՝ հս. լ. 45° 30' -ի և արևմտյան երկայնության 35° 30' - ի վրա: Որոշե՛լ նրա հեռավորությունը (կմ -ով).....2 միավոր
 1. հյուսիսային բևեռային շրջագծից,
 2. հարավային արևադարձից:

9. Բնական և հասարակական աշխարհագրությունների շփման գոտում առաջացել են նոր գիտություններ և ուղղություններ: Դրանց հաճախ կոչում են միասնական գիտություններ: Թվարկե՛ք դրանցից առնվազն 4-ը առանց բացատրության..... 1 միավոր
10. Երկրակեղևում ո՞ր շերտերի միջև են գտնվում Կոնրադի և Մոխոյի մակերևույթները..... 1 միավոր
11. 2005 – 2007 թթ. միջին հաշվով Հայաստանի Հանրապետություն էր ժամանել 9800, իսկ մեկնել՝ 16 720 մարդ: ՀՀ բնակչության թիվը կազմում էր 3,2 մլն մարդ: Որոշել.....3 միավոր
1. միգրացիայի մնացորդը (սալդոն),
 2. միգրացիայի ծավալը,
 3. միգրացիայի ինտենսիվության գործակիցը: